

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ր

Ընդունված է 2005 թվականի
դեկտեմբերի 21-ին

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տրակտորների, ինքնագնաց շասիների և տրակտորային կցանքների, ինքնագնաց գյուղատնտեսական մեքենաների, ինչպես նաև ոչ ինքնագնաց մեխիորատիվ, հիդրոմեխիորատիվ մեքենաների և գյուղատնտեսական սարքավորումների պետական հաշվառման, շահագործման և վարման իրավունքի տրամադրման ընթացքում ծագող իրավահարաբերությունները:

(1-ին հոդվածը լրաց. 15.09.2010 ՀՕ-26-Ն)

Հոդված 2. Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման կանոնների մասին օրենսդրությունը

Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

Եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝ գյուղատնտեսական տեխնիկա՝ տրակտորներ, հացահատիկահավաք և կերահավաք կոմբայններ և ինքնագնաց խոտհնձիչներ, ինչպես նաև ոչ ինքնագնաց գյուղատնտեսական մեխիորատիվ, հիդրոմեխիորատիվ մեքենաներ և սարքավորումներ, որոնք նախատեսված են գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար:

տրակտորներ՝ մեխանիկական տրանսպորտային միջոցներ (որոնց հետ ագրեգատավորվում են մեքենաներ ու գործիքներ՝ համապատասխան աշխատանքներ կատարելու համար), ինչպես նաև ընդհանուր նշանակության տրակտորներ, որոնք նախատեսված են գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության բոլոր տեսակի մեքենայացված աշխատանքներ կատարելու համար (վարցանք, կուլտիվացիա, սրսկում, հարթեցում և այլն):

ինքնագնաց գյուղատնտեսական մեքենաներ՝ հացահատիկահավաք կոմբայններ, կերահավաք մեքենաներ, որոնք աշխատում են ներքին այրման շարժիչով և կարող են ինքնուրույն տեղաշարժվել, ինչպես նաև մեխիորատիվ մեքենաներ, որոնք օգտագործվում են հողերի մակերեսային ու արմատական բարելավման և հիդրոմեխիորատիվ աշխատանքներում:

ոչ ինքնագնաց գյուղատնտեսական մեխիորատիվ, հիդրոմեխիորատիվ մեքենաներ և սարքավորումներ (այդ թվում՝ անձրևային և անտառային մեքենաներ ու սարքավորումներ՝ նախատեսված են հող մշակելու, պարարտանյութ մտցնելու, վնասատուների և բույսերի հիվանդությունների դեմ պայքարելու, սերմեր վերամշակելու, խոտ չորացնելու և սիլոս պատրաստելու, գյուղատնտեսական մշակաբույսեր մշակելու, ինչպես նաև անասնապահական և թռչնաբուծական ֆերմաների կոմպլեքսային մեքենայացման, անասնապահական ֆերմաների ու արոտավայրերի ջրամատակարարման, մեխիորատիվ, հիդրոմեխիորատիվ և անտառային տնտեսության աշխատանքների կազմակերպման, տորֆային տարածքների վերամշակման և տորֆի հանույթից պարարտանյութի պատրաստման համար:

(հասկացությունը հանվել է 23.06.2011 ՀՕ-34-Ն)

տրակտորային կցանքներ՝ անիվների վրա հարթակներ, որոնք նախատեսված են ծանր բեռների փոխադրման համար:
(3-րդ հոդվածը լրաց. 15.09.2010 ՀՕ-26-Ն, լրաց. 15.09.2010 ՀՕ-26-Ն, փոփ. 23.06.2011 ՀՕ-34-Ն, լրաց. 18.09.2014 ՀՕ-34-Ն)

Գ Լ ՈՒ Խ 2

ԳՅՈՒՂԱՏՆՈՒՄՆԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՍԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հոդված 4. Գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների պետական հաշվառման պայմանները, պետական միասնական համարանիշների տրամադրումը
(վերնագիրը խմբ. 18.09.2014 ՀՕ-34-Ն)

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում շահագործվող գործարանային արտադրության կամ ինքնաշեն գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքներն ենթակա են պարտադիր պետական հաշվառման (այսուհետ՝ հաշվառում):
2. Գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների սեփականատերերը պարտավոր են տեխնիկայի կամ կցանքները ձեռք բերելուց հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ 15-օրյա ժամկետում, դիմել գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչությանը՝ այն հաշվառման վերցնելու համար:
3. Հաշվառման ենթարկված գյուղատնտեսական յուրաքանչյուր տեխնիկայի համար սեփականատիրոջը տրվում է պետական համարանիշ (բացառությամբ ոչ ինքնագնաց գյուղատնտեսական մեխիորատիվ, հիդրոմեխիորատիվ մեքենաների և սարքավորումների) և տեխնիկական վկայագիր, իսկ տրակտորային կցանքների համար՝ պետական համարանիշ և տեխնիկական կտրոն, որոնց ձևերը հաստատում է գյուղատնտեսության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին):
4. Գյուղատնտեսական տեխնիկայի (բացառությամբ ոչ ինքնագնաց գյուղատնտեսական մեխիորատիվ, հիդրոմեխիորատիվ մեքենաների և սարքավորումների) առանց տեխնիկական վկայագրի, պետական համարանիշի, իսկ տրակտորային կցանքների դեպքում՝ առանց տեխնիկական կտրոնի, պետական համարանիշի շահագործումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

(4-րդ հոդվածը լրաց., խմբ. 15.09.2010 ՀՕ-26-Ն, խմբ. 18.09.2014 ՀՕ-34-Ն)

Հոդված 5. Գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների հաշվառումը և հաշվառումից հանելը
(վերնագիրը խմբ. 18.09.2014 ՀՕ-34-Ն)

1. Գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքները հաշվառելու համար սեփականատերը պարտավոր է գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսուչին ներկայացնել՝
 - ա) դիմում.
 - բ) գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ.
 - գ) ինքնաշեն գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների հաշվառման դեպքում հիմնական հանգույցների (շարժիչի, ամրաշրջանակի) ձեռքբերման օրինականությունը հաստատող փաստաթղթեր.
 - դ) «բ» և «գ» կետերում նշված փաստաթղթերի բացակայության դեպքում սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ է համարվում դատարանի վճիռը կամ օրենսդրությամբ սահմանված կարգով նոտարի կողմից վավերացված՝ սեփականատիրոջ հայտարարությունը.
 - ե) գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների հաշվառման համար օրենքով նախատեսված տուրքերի վճարումների անդորրագրերը.
 - զ) ֆիզիկականանձը՝ անձը հաստատող փաստաթուղթ, իսկ իրավաբանականանձը՝ պետական գրանցման վկայագիր:Տեխնիկական վկայագիրը և տեխնիկական կտրոնը ստորագրում և կնքում է գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչությունը:
2. Գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատիրոջը պատկանող հաշվառման վերցված գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական վկայագրի, պետական համարանիշի (բացառությամբ ոչ ինքնագնաց գյուղատնտեսական մեխիորատիվ, հիդրոմեխիորատիվ

մեքենաների և սարքավորումների) և տրակտորային կցանքների սեփականատիրոջը պատկանող հաշվառման վերցված տրակտորային կցանքների տեխնիկական կտրոնի, պետական համարանիշի տվյալները գրառվում են գյուղատնտեսական տեխնիկայի հաշվառման գրքում: Հաշվառման գիրքը պահպանվում է 20 տարի՝ պետական կառավարման լիազորված մարմնում:

3. Գյուղատնտեսական տեխնիկական և տրակտորային կցանքներն հաշվառումից հանվում են՝
ա) գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման դեպքում:

բ) գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների ոչնչացման դեպքում:

գ) գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների խոտանման դեպքում:

Խոտան ճանաչելու չափանիշները սահմանում է լիազորված մարմինը:

4. Գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման մասին տվյալները գրառվում են տեխնիկական վկայագրում, տրակտորային կցանքների դեպքում՝ տեխնիկական կտրոնում, իսկ գյուղատնտեսական տեխնիկայի ոչնչացման և խոտանման դեպքում՝ տեխնիկական վկայագիրը և պետական համարանիշը, տրակտորային կցանքների դեպքում՝ տեխնիկական կտրոնը և պետական համարանիշը վերադարձվում են գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչությանը, որի մասին համապատասխան գրառում է կատարվում գյուղատնտեսական տեխնիկայի հաշվառման գրքում:

Դիմումի ձևերը հաստատում է լիազորված մարմինը:

(5-րդ հոդվածը լրաց. 15.09.2010 ՀՕ-26-Ն, խմբ. 23.06.2011 ՀՕ-34-Ն, խմբ. 18.09.2014 ՀՕ-34-Ն)

Հոդված 6. Գյուղատնտեսական տեխնիկայի վարման իրավունքի փաստաթղթերի տրամադրումը

1. Գյուղատնտեսական տեխնիկական (բացառությամբ ոչ ինքնագնաց գյուղատնտեսական մեխորատիվ, հիդրոմեխորատիվ մեքենաների և սարքավորումների) ըստ տեսակների, նշանակության, դեկավարման և շահագործման առանձնահատկությունների ու ճարմանդային հզորությունների դասակարգվում է՝ «A», «B», «C», «D», «E» և «F» խմբերի՝

«A» խումբ՝ անիվավոր տրակտորներ, որոնք ունեն մինչև 14 կիլոնյուտոն (մինչև 80 ծիաուծ շարժիչի) հզորություն:

«B» խումբ՝ անիվավոր տրակտորներ, որոնք ունեն 14 կիլոնյուտոնից (80 ծիաուծ շարժիչից) բարձր հզորություն:

«C» խումբ՝ ընդհանուր նշանակության թրթուրավոր տրակտորներ:

«D» խումբ՝ գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաներ, որոնք գործում են մեխանիկական շարժահաղորդումով:

«E» խումբ՝ գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաներ, որոնք գործում են հիդրավլիկ շարժահաղորդումով:

«F» խումբ՝ մեխորատիվ մեքենաներ, այդ թվում՝ մինչև 0,65 խոր.մ շերտի տարողությամբ էքսկավատորներ:

2. Տրակտորիստ-մեքենավարները պետք է ունենան գյուղատնտեսական տեխնիկական վարելու իրավունքի համապատասխան կարգեր:

Տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի կարգերն ըստ գյուղատնտեսական տեխնիկայի խմբերի դասակարգվում են՝

- երրորդ կարգի տրակտորիստ-մեքենավար, որն իրավունք ունի վարելու «A» և «C» խմբերին դասվող տրակտորները,

- երկրորդ կարգի տրակտորիստ-մեքենավար, որն իրավունք ունի վարելու «A», «B», «C» և «D» խմբերին դասվող տրակտորները և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաները,

- առաջին կարգի տրակտորիստ-մեքենավար, որն իրավունք ունի վարելու բոլոր խմբերին պատկանող տրակտորները, ինքնագնաց, մեխորատիվ մեքենաները:

3. Տրակտորիստ-մեքենավարն իրավունք ունի վարելու այն տրակտորների ու ինքնագնաց մեքենաների խմբերը, որոնց դիմաց վարման վկայականում կա «թույլտվություն» նշանը:

4. Տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայականը տրվում է գյուղատնտեսական մեքենաների շահագործման, ճանապարհային երթևեկության կանոնների իմացության և գործնական վարման հմտությունները որակավորման հանձնաժողովի կողմից ստուգվելուց հետո: Տրակտորիստ-մեքենավարների գիտելիքների ստուգման կարգը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

(6-րդ հոդվածը լրաց. 15.09.2010 ՀՕ-26-Ն)

Հոդված 7. Տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայական տալու

ընթացակարգը

1. Որակավորման քննություններին թույլատրվում է մասնակցել 17 տարին լրացած անձանց:
2. Տրակտորիստ-մեքենավարի վկայական ստանալու համար դիմող անձը մինչև քննության օրը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝
 - ա) դիմում.
 - բ) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր).
 - գ) տրակտորիստ-մեքենավարների դասընթացի ավարտման մասին տրված փաստաթուղթ.
 - դ) երկու լուսանկար 3 x 4 սմ չափսի.
 - ե) պետական տուրքի վճարման անդորրագիրը.
 - զ) տրակտորիստ-մեքենավարի վկայականը՝ վարման իրավունքի կարգը փոխելու դեպքերում:
3. Դիմումի ձևը հաստատում է լիազորված մարմինը:
3. Անհրաժեշտ փաստաթղթերից որևէ մեկի բացակայության դեպքում անձը գրկվում է որակավորման քննություններին մասնակցելու իրավունքից:
4. Տրակտորիստ-մեքենավարն իրավունք ունի վարելու միայն վարման իրավունքի վկայականում նշված խմբի գյուղատնտեսական տեխնիկա:
5. Տրակտորիստ-մեքենավարի դասընթացներն ավարտելու մասին տրված ավարտական փաստաթուղթն իրավունք չի տալիս վարելու գյուղատնտեսական տեխնիկա:
6. Որակավորման քննությունների հանձնման դրական արդյունքների հիման վրա 18 տարին լրացած քաղաքացուն տրվում է տրակտորիստ-մեքենավարի համապատասխան կարգի վարման իրավունքի վկայական՝ հիմք ընդունելով որակավորման հանձնաժողովի եզրակացությունը:
7. Տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայականը տրվում է անձը հաստատող փաստաթղթի հիման վրա և վկայականների գրանցամատյանում ստորագրելուց հետո:
8. 3-րդ կարգի տրակտորիստ-մեքենավարի իրավունք ձեռք բերելու նպատակով դիմող վարորդական վկայական ունեցող անձինք ազատվում են ճանապարհային երթևեկության կանոնների քննություն հանձնելուց:
9. Առանց համապատասխան կարգի վարման իրավունքի վկայականի գյուղատնտեսական տեխնիկայի շահագործումն արգելվում է:

(7-րդ հոդվածը խմբ., լրաց. 18.09.2014 ՀՕ-34-Ն)

Հոդված 8. Գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների վիճակը և շահագործումը
(վերնագիրը խմբ. 23.06.2011 ՀՕ-34-Ն, լրաց. 18.09.2014 ՀՕ-34-Ն)

1. Գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով տրակտորիստ-մեքենավարը պարտավոր է սարքին վիճակում պահել արգելակները, անիվները և թրթուրները, ղեկային մեխանիզմը, լուսավորման և ազդանշանային համակարգերը:
 2. Տրակտորիստ-մեքենավարներն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում գյուղատնտեսական տեխնիկայի և տրակտորային կցանքների անվտանգ շահագործման և ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնները խախտելու համար:
- (8-րդ հոդվածը լրաց. 15.09.2010 ՀՕ-26-Ն, խմբ. 23.06.2011 ՀՕ-34-Ն, լրաց. 18.09.2014 ՀՕ-34-Ն)*

Գ Լ ՈՒ Խ 3

ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 9. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

Սույն օրենքի պահանջները խախտելու կամ չկատարելու դեպքում անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Հոդված 10. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

23 հունվարի 2006թ.
ք. Ստեփանակերտ
ՀՕ-250

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ